

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ  
ИСТОРИЯ  
HISTORY

ՀՏԳ՝ 93/94-(093)

DOI: 10.52971/18294316-2022.25.2-145

ԽՈՒԲՈՒՇԿԻԱ ԵՎ ԱՐՄԱՆԱԿԻ ԵՐԿՐՄԵՐԻ ՆՈՒՅՆՈՒԹՅԱՆ  
ՈՒ ԲՆՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ

*Մարգիս Պետրոսյան*

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

Քանալի բառեր՝ կառամարտիկ, դասեր, Խուրուշկիա, Արմիրալի, Մոկք,  
Անձնացիք, Արմարուր, Հովա դաշտ, Խեմուկա, Ուրարտու:

Հողվածի քննության առարկան ասորեստանյան սեպագիր արձանագրություններում հիշատակված Խուրուշկիա, Նաիրի և Արմիրալի անուններով հանդես եկած երկրի տեղորոշման հարցն է և Armirali երկրանունը: Ապացուցում ենք, որ վերջինը ևս վերաբերում է այն նույն տարածքին, ինչ և նախորդները: Այս երկիրը ընդգրկում էր հետագա Մեծ Հայքի Մոկք նահանգը և Վասպուրական նահանգի Անձնացիք զավառը: Ապացուցում ենք, որ Խուրուշկիան եղել է կառամարտիկների, ապա նաև՝ հեծյալների արտոնյալ խավերի կողմից կառավարվող երկիր: Մրանք ներկայացրել են զինվորական, մասամբ նաև քրմական դասերը: Դա հաստափում է այնպիսի հատուկ անունների միջոցով, ինչպիսիք են. Armirali, Kaki/Kakia և Լանչ: Այդուհանդերձ, պետության ստեղծման գործում առաջնային դեր ունեցել է զինվորական դասի կառամարտիկ վերնախավը: Armirali անունը դրա վկայությունն է: Բերված հատուկ անունների ստուգաբանություններն ել նպատակ ունեն ապացուցելու նշված տարածքներում հնդեվրոպական-հայկական էթնիկական տարրի (հայախոս բնակչության) առկայությունը դեռևս սեպագրային դարաշրջանում:

**Նախարան.** Մ.թ.ա. II հազարամյակում և I հազարամյակի առաջին կեսին Մերձավոր Արևելքում ծավալված ռազմաքաղաքական իրադարձություններում կարևոր դեր է վերապահված եղել զինվորական (մասամբ նաև քրմական դասին) պատկանող

կառամարտիկներին և նրանց վերնախավը ներկայացնող խմբավորումներին: Ընթացող գործընթացներից զերծ չի մնացել Հայկական լեռնաշխարհը ևս: Տեղաբնիկ ցեղերի կառամարտիկների մի մասը լծված էր հայրենի տարածքները պաշտպանելու գործին, իսկ մյուս մասը դարձել էր խեթական, ապա ասորեստանյան բանակում ծառայող զինվորներ: Խեթերը սրանց հիշատակել են ըստ ծագման վայրերի կամ ցեղանունների՝ Ալար (կամ Ատրա), Manda, Sala, Tamalkija, Խիսսա<sup>1</sup>: Մինչև մ.թ.ա. XIII դարի կեսերը սրանք ապահարկ էին:

### 1. Խուրուշկիան՝ զինվորական դասի երկիր

Ավանդական Վաղարշակ թագավորի կողմից Հայաստանում նախարարություններ հաստատելու աղիթով պատմահայրն անդրադառնում է նաև Վանա լճից հարավ ընկած շրջաններին՝ Մեծ Հայքի Մոլք, Կորճայք նահանգներին և Վասպուրական նահանգի հարավային հատվածին: Նրա անզուգական երկում կարդում ենք. «Իսկ զՄոկացիս ի նոյն գաւառէ գտեալ այր, որ ունէր ընդ իրեաւ սրիկայս բազումս՝ նախարարութիւն հաստատէ: Նոյնպէս և զԿորդուացիս, և զԱնձաւացիս, եւ զԱկէացիս ի նոյն (իմա՝ նույնանուն- Ս.Պ.) գաւառաց»<sup>2</sup>: Իսկ Արտավազդ թագավորին հաջորդած Տիրանի առթիվ պատմահայրը գրում է. «Յաւուրս սորա ասեն լեալ զպատանի որմն յազգէն Անձաւացեաց... Զոր սիրեալ արքայի՝ տայ նմա զզահն երկրորդական, զոր ունէրն Արտաւազդ. և զինոս արևելեան զօրուն ի նա հաւատացեալ առ նմա թողու զԴրուասպ ոմն պարսիկ զմտերիմ իւր»<sup>3</sup>: Ուրեմն, ինչպիսի հզորն էր լինելու Անձաւացի/Անձեւացի տոհմը, որ արքան նրա պատանի ներկայացուցիչին է վստահել տերության երկրորդ գահը և Հայոց բանակի չորս զորամիավորումներից մեկի՝ «Արևելյան դռան» հրամանատարությունը: Վերջին բարձր զինվորական պաշտոնը Անձաւացի նախարարներն զբաղեցրել են (ըստ երևույթին՝ փոփոխակի) նաև հաջորդ դարերում:<sup>4</sup>

Ուրարտական դարաշրջանում Արևելյան Տիգրիսի վերին և միջին հոսանքների շրջանները՝ հետագա Մեծ Հայքի Վասպուրական նահանգի Անձեւացիք զավառը և Մոլք նահանգը ներառյալ կազմում էին Ուրարտուին ենթակա, բայց ուզմունակ Նաիրի կամ Խուրուշկիա կոչված թագավորությունը: Ասորեստանի Սալմանասար III թագավորը պատմում է, թէ մ.թ.ա. 859 թ. իր բանակը ինչպէս է դժվարությամբ հասել Խուրուշկիա քաղաք: Քաղաքի մոտ ընթացած դաժան մարտերից հետո խուրուշկիացի մարտիկները իրենց Կակիա արքայի գլխավորությամբ նահանջել էին լեռները: Արձանագրության համաձայն՝ Սալմանասար III-ը հետապնդել էր նրանց և պարտության մատնել լեռներում: Ասորեստանի թագավորը պատմում է. «Ես հրդեհեցի Խուրուշկիա քաղաքը՝ շրջակա հարյուր քաղաքների (իմա՝ բնակավայրերի-Ս.Պ.) հետ միասին... Մարտակառքեր, ձիեր, լծկածքներ՝ այդ բոլորը ցած իշեցրի լեռներից»<sup>5</sup> Խուրուշկիայի լեռնցիների համառ դիմադրությունը կազմակերպած մարտաշունչ արքան համապատասխան անուն ուներ Kaki/Kakia, որի մեջ առանձնանում են \*kak- արմատը և \*-i/ia վերջածանցը: Այս վերջինը

<sup>1</sup> Տե՛ս WVDO -1916/1926. VI, 2, 3, 4, 6.

<sup>2</sup> Խորենացի -1981, գիրք Բ, գլ. ը:

<sup>3</sup> Նոյն տեղում, գլ. կը:

<sup>4</sup> Նոյն տեղում, գիրք Գ, գլ. լլ: Քիւզանդացի -1987, գիրք Ե, գլ. լլ:

<sup>5</sup> Վղոնի Ն. -1972, էջ 78; Արտօնական Հ. -1970, ս. 70-71, 102-104, 111-113, 127-130.

նույնական է Հսեսքիա անվան -ia վերջածանցի հետ՝ ծագելով \*-(i)ia վերջածանցից և լի-նելով համարժեքը հայերն -ի վերջածանցի (հմմտ. բարի, կողի, հանի, սասի և այլն): Իսկ \*kak արմատը նույնն է լինելով հայերն կազ «վեճ, կոխվ» արմատի հետ, որից ու-նենք կազիլ «կովել», կազաւէր և կազացող «կովարար» բառերը:<sup>6</sup> Սեպազրում հիշա-տակված Kak(a) և հետազոյում հայտնի դարձած Գազիլ արքայանունների միջև ստու-գաբանական կապի գոյությունը փաստվում է դյուցազնավեպի Կակիզ թագավորի տի-րույթները նույնպես Վանա լճից հարավ տեղորշված լինելու միջոցով: Այս Գազիլ-Կա-կիզը «կը թագավորեր Գավաշի, Խավի ծորի, Շատախի, Մոկաց, Սպարկերտու, Խիզա-նի, Կարկառի, Կարձկանի վրա»<sup>7</sup>:

Խուրուշկիա քաղաքը, հավանաբար, գտնվել է «Սասնա ծռեր» դյուցազնավեպի Հովա դաշտ կոչված վայրում, որովհետև Հսեսք-ia բաղադրիչներից բաղկացած տե-ղանվան իսե-/\*հով բաղադրիչը կարելի է նույնը համարել Հովա դաշտի (ուղղ. հոլովը՝ Հով) անվան հետ: «Սասնա ծռեր» դյուցազնավեպի Մոկաց տիպի պատումներում Հովա դաշտը համարվում է Սատունի Դավթի և Մարա Մելիքի կովի վայրը<sup>8</sup>: Հսեսքիա տե-ղանվան իսե- և Հովա դաշտի անվան Հով բաղադրիչների հետնորդը պիտի լինի նույն վայրում գտնված և մինչև XX դ. սկզբները հայաբնակ Սամոտանք զավառի Օվ գյուղի անունը<sup>9</sup>: Հսեսքիա տեղանվան Հսե բաղադրիչը կարելի է կարդալ նաև հով- (սեպազիր ի/հայ. իս, իս, սեպ. ս/հայ. ու, ո/ս, սեպ. բ/հայ. բ, վ) և նույնացնել ոչ միայն Հովա դաշտ տեղանվան, այլև հայ. հովիլ (<հովի-լ) բարի առաջին բաղադրիչների հետ: Հովիլ-ը բա-ռացիորեն «ոչխարապահ» է նշանակում, իսկ հովի-ն՝ «ոչխար»: Նրա արմատակիցներից են լուր. հաս- «ոչխար», ինը հնդկ. ա'vi «ոչխար», լատին. avis «ոչխար», հուն. ῥ(F)ις «ոչ-խար» բառերը և «ոչխարապահ»//«հովիլ» նշանակող ինը հնդկ. avi-pāla'-ն:<sup>10</sup>

Մեր ոսկի բարն էլ կարելի է տեսնել Հսեսք-ia տեղանվան երկրորդ բաղադրիչի մեջ՝ բայց իր \*oskia նախաձեռով (հիշենք, սեպ. ֆ/ս և ս/օ ընթերցման հնարավորությու-նը): Այս նախաձեռ նույն տեսքով առկա է նաև Uškia սեպազիր լեռնանվան մեջ, որը Սոտքի ոսկեհանքը պարունակող լեռնան անունն էր:<sup>11</sup> Այս դեպքում Հսեսքիա-ն կլիներ Հովա դաշտի անունը և կնշանակեր «Ուսկյա ոչխարի (դաշտ)», որից՝ բաղադրի անունը: Հիշենք հունական Ուսկե գեղմի առասպելը<sup>12</sup>, որում ոսկե գեղմով ոչխարը խորհրդան-

<sup>6</sup> Աճայան Հ. -1973, հ. II, էջ 477: Կարծում ենք, որ արմատակիցներ են կազ բարը, Kak/kakia, Kakadanu անձնանունները և կակմե տերմինը: Վերջինի մասին տեսն Դյակոն Ի. -1951, №№ 2-4, հաճ. № 46: ՀՃՊ-Ք -1981, հ. I, էջեր 26-27: Պետք չէ կակմե-ներին առանձնացնել Ուրարտուի հայա-խոս բնակիչներից կամ նրանց համարել Զիկիրտուի և Անդիայի բնակիչներ (տեսն Դյակոն Ի. -1951, №46, որ. 8): Աղոնց Ն. -1972, էջ 101, ծան. 1: Արցունի Ա. -1970, էջ 296, որ. 472): Կակմեները, ըստ ամենայնի, պատկանել են Ուրարտուի զինվորական դասին: <մմտ. kak- բաղադրիչով կազմված այդ նույն ժամանակաշրջանի Ուրարտուի «առաջին սպարապետի» Kakadanu անունը (Դյակոն Ի. -1951, №50): Հակառակ ընդունված կարծիքի (Արցունի Ա. -1970, ծան. 399) ասուլերեն զազգած «զոլիս» բառն այստեղ գործ չունի:

<sup>7</sup> ՄԾ -1936, հ. I, էջեր 475-480, 607-609 և 1091:

<sup>8</sup> ՄԾ -1936, հ. I, էջեր 512, 572, 578, 802:

<sup>9</sup> Ա-Գո -1912, էջ 95:

<sup>10</sup> Աճայան Հ. -1977, հ. III, էջ 117, Գամկրելիձ Տ., Իվանով Բ. -1984. թ. II, ս. 577, 579.

<sup>11</sup> Մելիկանավալի Գ. -1960. ս. 446, հաճ. N 155; Պետրոսյան Ս. -1984, 2, էջեր 178-179:

<sup>12</sup> Կոմ Ն. -1956, էջեր 309-311, 329, 338:

շում էր արևը (ոսկեգույնը նրա գույնն է, իսկ ոսկին՝ արևին ձռնված մետաղը), ինչպես նաև՝ Խուրուշկիայի հետնորդ Մոլքի հյուսիսային սահմանագլուխը կազմած լեռան *Արտոս* (հմմտ. գրաբար արտի/արտիկ «վայրի էգ ոչխար») և հարավայնի սահմանագլուխը կազմած լեռան *Առնոս* (հմմտ. գրաբար՝ *առն* «վայրի արու ոչխար») անունները:<sup>13</sup> Այս դեպքում պետք է նկատի առնել, որ առասպելաբանորեն հյուսիսը՝ որպես ձախ կողմ (մեր նախնիների կողմնորոշումը դեպի արևելք էր) համադրվում էր իգական-մայրական սկզբունքի, իսկ հարավը՝ որպես աջ կողմ, համադրվում էր արական-հայրական սկզբունքի հետ:<sup>14</sup> Արտոսն ու Առնոսը՝ մայր և հայր լեռներ ըմբռնվելիս, նրանց ծնունդն էլ կարող էր ըմբռնված լինել հայկական «ոսկե ոչխարը»՝ հունական ոսկե գեղմով ոչխարի զուգահեռը՝ Հովա դաշտի հովանավոր աստվածությունը: Ասորեստանի թագավորների կողմից նրան տրված Նահրի անունը (այն Խուրուշկիա կոչվում էր իր մայրաքարաքի անունով):<sup>15</sup>

Kak(i)a սեպագրային արքայանվան և դյուցազնավեպի Գագիկ/Կակիկ թագավորի կերպարների միջև նկատվող ընդհանրության մասին է խոսում ոչ միայն նրանց անունների լեզվաբանական նույնությունը և նույն տարածքում (իրական թե մտացածին) իշխած լինելու հանգամանքները, այլև դրանք կապակցող օղակի գոյությունը՝ այն իրողությունը, որ այդ նույն տարածքները հասուն միջնադարում մասն էին կազմում Վասպուրականի Արծրունիների թագավորության, որի հիմնադիրը նույնպես Գագիկ էր կոչվում:<sup>16</sup>

Թե՛ Խուրուշկիայի Կակիա (Կակի) թագավորին, թե՛ «Սասնա ծոեր»-ի Կակիկ (Գագիկ) թագավորին, թե՛ Վասպուրականի առաջին՝ Գագիկ Արծրունի թագավորին ենթակա տարածքները գերազանցապես կազմում էին Վանա լճից հարավ և հարավարևելք տարածված միևնույն գավառները: Այս նույնությունը կարելի է բացատրել, մեր կարծիքով, միայն հազարամյակների խորքից անխափան եկած այն ընդհանրության գիտակցումով, որը հատուկ է եղել վերոհիշյալ շրջանների բնիկ բնակչությանը՝ նույնիսկ օտարերկրյա տիրապետության պայմաններում: Վասպուրական և Մոլք նահանգների հիշյալ գավառների բնիկները կազմում էին հայության վլոշիկ կոչված ազգագրական խումբը: Անվան կազմության համար հմմտ. մեր ազգագրական մյուս խմբերին տրված անուններից արմնիկ, գեղնիկ, զողիկ (իսկ օտարազգիներին տրված ցեղանուններից՝ խափշիկ, կայսիկ, հնդիկ, պարսիկ և այլն): Վլոշիկ (<վլշ-իկ) անվան արմատը նույնն է վլշնել (<վլշ-ն-ել) բառի արմատի հետ, որն, անշուշտ, «կարմիր» է նշանակել, որովհետև վլշնել նշանակում է «կարմրատակել, շառագունել»<sup>17</sup>: Նրանով վլոշիկ անվան կազմումը պայմանավորված էր լինելու հիշյալ շրջանների բնակչության նախնիների զինվորական դասը ներկայացնելու իրողությամբ: Հնդեվրոպական միասնու-

<sup>13</sup> Պետրոսյան Ս. -1991, 2, էջեր 127-128:

<sup>14</sup> Հմմտ. Հայաս և Azzi (տե՛ս: Պետրոսյան Ս. -1987, 3, էջեր 77-87):

<sup>15</sup> Աղոնց Ն. -1972, էջեր 79, 111:

<sup>16</sup> Տեր-Գևոնդյան Ա. -1977, ս. 243-244.

<sup>17</sup> Մալխասյանց Ստ. -1945, IV, էջ 353:

թյան շրջանում կարմիր գույնը հատկացված էր զինվորական դասին, իսկ սպիտակը՝ քրիմականին<sup>18</sup>:

## 2. Կառամարտիկներին առնչվող Armirali տեղանունը:

Եթե բերված անունների մեջ արտացոլված ենք տեսնում զինվորական դասի գոյությունը, ապա հավանականություն կա, որ այստեղ իրենց հիշատակը թողած լինեն նաև իրենք՝ կառամարտիկները: Այդպիսին մենք համարում ենք նույնպես սեպագրությամբ ավանդված Armirali-(ա/ս) երկրանունը<sup>19</sup>: Վերևում նշվեց, որ ասորեստանցիներից այս երկրին տրված Նահրի և Խուրուշկիա անունները նրա բուն անունները չեն: Սրանցից առաջինը Հայկական լեռնաշխարհին տրված ընդհանրական անվան մասնավորեցումը, իսկ երկրորդը երկրի մայրաքաղաքի անունն էր: Երկրի իսկական անունը, դրանց նման, մեզ հասել է դարձյալ ասորեստանցու միջոցով, բայց տեղում եղած (ուրեմն նաև տեղում լսած) անձի միջոցով: Դա լրտեսներից մեկն էր Ուրարտուին սահմանակից ասորեստանյան նահանգի կառավարիչ, զիսավոր լրտես Աշուրիսուայի: Դրա և իր նմանների հաղորդած տեղեկությունների հիման վրա Աշուրիսուան զեկուցագրեր էր ուղարկում Սարգոն II-ին (721-705 թթ. մ.թ.ա.): Դրանցից մեկում թվարկված են Ուրարտուի հարավային նահանգների կառավարիչները, որոնց նահանգները հարևան էին Մուծածիրին և Ասորեստանին: Դրանցից վերջինը Արմիրալիուն է<sup>20</sup>, նրա նախորդը՝ Ալգին (հետագա Աղձնիքը)<sup>21</sup>, որից արևելք էր գտնվելու Արմիրալիուն: Սրանց կառավարիչները հավաքվել էին Վանա լճի հարավային ափին գտնված Ուեսի նահանգում (կոչված նաև Ուայախս<sup>22</sup>, հետագա Երևարք և Ռշտունիք գավառները միասին): Իսկ այս նահանգից հարավ՝ հետագա Մոլքն էր՝ Երևարքի և Ռշտունիքի հարևանը հարավից: Այսպիսով, պարզվում էր, որ հետագա Աղձնիքից արևելք, Երևարք-Ռշտունիքից հարավ և Մուծած ծիրից հյուսիս գտնված Armirali- նահանգը հետագա Մոլքն ու Անձնացիքը ներառած նույն Խուրուշկիան է: Անունների նմանության պատճառով այս Արմիրալին նույնացնում են Վանա լճի հյուսիսարևելյան ափամերձ շրջանները բռնած, Սարգոն II-ի կողմից հիշատակված Արմարիլի կամ Արմարիյալի նահանգի հետ<sup>24</sup>: Բայց դա անհնար է, որովհետև 1. վերջինը նույնական է Սալմանասար III-ի հիշատակած Արամալիի հետ՝ Վանա լճից հյուսիս-արևելք, Արծաշկու (հետագա Արձեշը)<sup>25</sup> կենտրոնով, 2. սա

<sup>18</sup> Գամկրելիձե Տ., Իվանով Բ. -1984. II, շ. 788, որ. 3 և 5: Կարմիր գույնի ձիով էր պատկերացվում նաև տեղական Ս. Եղիշեն: Գ. Սրբանձայանցը այս առժիվ գրում է, որ Մոլքն Վերին Տատիկ զավառակի գյուղերից «Վերիսա եկեղեցին Ս. Եղիշեի անունով շինված է, նսեմ և գծուծ շենք մը, դուռը միշտ բաց, ուր ոխտավորը և աղոթվորը կը հաճախեն՝ հայ և բյուրդ: «Ծառ գորավոր է մեր Ս. Եղիշեն, - կը պատմեր ծերունի մը, - որ օգնության կը հասնի ամեն վտանգելոց, և թե հերազի (ի երազից Երազի-Ս.Պ.), և թե բաց աշոք շատ անգամ կը տեսնամք զինքն. ինքն է կարսիր ձիավոր, զրահավոր, ճերմակ մորուր վարդապետ, ճգնավոր» (Արվանձայան Գ. -1978, էջ 146):

<sup>19</sup> Դյակոն Ի. -1951, հաճ. № 50.

<sup>20</sup> Աղոնց Ն. -1972, էջ 114:

<sup>21</sup> Դյակոն Ի. -1951, հաճ. №№ 3-7, 10-11, 23, 28, 40.

<sup>22</sup> Նոյն տեղում, №№ 46, 49:

<sup>23</sup> Երեմյան Ս. -1963, էջեր 51, 79, 108:

<sup>24</sup> Աղոնց Ն. -1972, էջ 211; Դյակոն Ի. -1951, հաճ. № 50, որ. 5; Արյունյան Ի. -1970, շ. 284 որ. 402.

<sup>25</sup> ՀՃՊՀ -1981, էջեր 24, ծան. 7:

Ուրարտուի արքունի ոստանն էր, որովհետև այստեղ էին գտնվում Ուրարտուի (մեզ հայտնի) առաջին թագավոր Արամեի արքայանիստ Ալծաշկուն, Սարդուրի II-ի քաղաք Ռիարը, Ըուսա I-ի «հայրենական տուն» Արբուն, որի շրջակա 7 բնակավայրերում էլ բնակվում էին Ըուսայի «եղբայրները, նրա թագավորական սերմը»<sup>26</sup>, 3. Արմիրալին «կուսակալ»-նահանգապետ ուներ, որպիսին Արամալի-Արմարիլին, բնականաբար, չեր կարող ունենալ՝ որպես արքունի ոստան, 4. Արմիրալին հիշտակված է հարավային սահմանամերձ նահանգների շարքում, որոնց Ասորեստանի կողմից անմիջական հարձակման և ներխուժման վտանգ էր սպառնում, իսկ Արամալի-Արմարիլին գտնվում էր պետության կենտրոնում:

Ի՞նչ կարող է նշանակել Armirali-(ս/ա) երկրանունը: Փորձենք ստուգաբանել: Հստակ է, որ Arm-ir-ali-u/a բառը բաղկացած է arm- արմատից, -ir-, -ali- վերջածանցներից և -iս/-ia հոլովական վերջավորություններից: Դրանք բոլորը հնդեվրոպական ծագում ունեն: Անվան -ir- բաղադրիչը սեպագրային արտացոլումն է իրերի հակադրություն ցույց տվող հ.-ե. \*-er վերջածանցի<sup>27</sup>, -ali-ն տեղանվանակերտ վերջածանց է առկա նաև Aramale/Aramali, Դարանաղի, Մանսաղի, Մարդաղի տեղանուններում: Իսկ -iս/-ia սեռական և ուղղական հոլովների վերջավորություններն են (հմմտ. Ուրմիոյ<Ուրմիա, Գերմանիոյ<Գերմանիա, Խոտայոյ<Խոտայիա), եթե միայն արական (-iu) և իգական սեռի (-ia) ցուցիչները չեն դրանք<sup>28</sup>: Այս դեպքում հմմտ. Ասորիք > սեռ հոլով. Ասորեաց, եթք խոսքը երկրի մասին է (երկիրն իգական սեռի է), և Ասորոց, եթք խոսքը մարդկանց մասին է (մարդիկ արական սեռի են)<sup>29</sup>: Եթե Armirali- երկրանվան \*arm- բաղադրիչը «մարտակառք» է նշանակել (հմմտ. հուն. ἄρμα), ապա նրանից -er վերջածանցով կազմված \*armir-ը կնշանակեր «կառամարտիկ» (ի հակադրություն հետևակ զինվորի), իսկ տեղանվանակերտ վերջածանց -ali-ի հավելումով ստեղծված Armirali-ն՝ «Կառամարտիկ(ներ)ի տեղ, Կառամարտիկ(ներ)ի երկիր»:

Այժմ, \*arm- արմատի մասին մանրամասն: \*արմ-ը, հայերեն գուգահեռն է հին հունարեն պրա «ձիակառք, մարտակառք» բառի: Հայկական լեռնաշխարհում մարտակառքի և նրա նախատիպ երկանիվ ձիասայի շատ վաղ գործածության մասին խոսում են Հայատանի Ժայռապատկերները<sup>30</sup>: Իսկ մեր \*արմս-ի գուգահեռներից են նաև հայ. յարմար բառի արմ/հիմքը, հուն պրա «կցվածք, հավելված», լատին. arma «հարմարանք, սարք», ավեստ. arəm «հարմար, համապատասխան» և հին սլավ. jarīmъ «լուծ» (որից՝ ռուս. յրեմ, յրմո «լուծ, լծասարք») բառերը<sup>31</sup>: Հայ. յարմար բառը կազմված է \*արմ հիմքին / նախդիրի և -ար վերջածանցի հավելումով: Բերված բոլոր բառերը կազմվել են հ.-ե. \*ar- «կցորդել, միացնել, արվեստով հորինել» արմատից -մ աճականով<sup>32</sup>: Մեր բառի -ար վերջածանցի համար հմմտ. արդ-ար, զալ-ար, դալ-ար, կերպ-ար և այլն:

<sup>26</sup> ՀԺՊ-1981, էջ 31:

<sup>27</sup> Աճառյան Հ. -1957, III, էջ 110: Զահուկյան Գ. 1987, էջ 234:

<sup>28</sup> Հմմտ. Կարագյովյան Հ. -1978, 10, էջեր 62, 64-65, 72-73:

<sup>29</sup> Տե՛ս Աճառյան Հ. -1957, էջեր 293, 298-299, 302:

<sup>30</sup> Կարախանյան Գ., Սաֆյան Պ. -1970, նկ. 117-V և 276-II:

<sup>31</sup> Գամկրելիձե Տ., Իվանով Վ. -1984., Ա. էջեր 723, 731; Աճառյան Հ. -1977, III, էջեր 389-390:

<sup>32</sup> Աճառյան Հ. -1977, III, Եր., 1977, էջ 388:

### 3. Խուրուշկիայի վարձկանները

Վարձկան կառամարտիկներ խեթական քանակում կային նաև Հայաստա-Ազիհց և Հայկական լեռնաշխարհի մանդա, սալա, ինմուա, տամալկիյա և այլ ցեղերից: Այս տեսանկյունից ուշագրավ են եզիպտական որմնանկարները, որոնք խեթական քանակի զինվորներին պատկերում են տարբեր մարդարանական տիպերով և տարբեր տեսքի մարտակառքերով<sup>33</sup>: Դրանցից Ի. Ս. Դյակոնովի կարծիքով, սալա և ինմուա ցեղերին պետք է մոտավորապես տեղորշել «Հայկական լեռնաշխարհում՝ Եփրատի և Վանա լճի միջև, հնարավոր է նաև ավելի արևելք»<sup>34</sup>: Քանի որ սալայի տեղադրությունը ձգրտված է՝ Տարոնում էր, ապա «հնարավոր է ավելի արևելք» տեղորշումը կարող ենք վերաբերել խնմուա/իշմուվային: Ինքը՝ Դյակոնովը, այս ցեղանվան հիմքում է Մեծ Զար գետի ավագանում գտնված Լսիա/Luhi և Alamun երկրների հետ հիշատակված Հեմե/Հեմմե երկրի անունը<sup>35</sup>: Նա նշում է, որ դրանցից վերջինը նույն է լինելու Ասորեստանի Սալմանասար I թագավորի (մ.թ.ա. 1274-1245 թթ.) կողմից Ուրուատրի ցեղամիության կազմում հիշատակված Հեմմե-ի և Աշուրբեկալայի (մ.թ.ա. 1076- մոտ. 1059 թթ.) հիշատակած Հեմմու-ի հետ<sup>36</sup>: Ըստ Ն. Տարությունյանի, Խիմմե երկրի տեղադրությունը որոշվում է այն տարածքում, որը գտնվում էր Վանա լճից հարավ-արևելք, Էլամունիա գետից (Մեծ Զար գետի վերին հոսանքից) արևմուտք՝ նրա և Տիգրիսի արևելյան ճյուղի միջև<sup>37</sup>: Դժվար չէ կրահելք, որ դա այն նույն տարածքն է, որ հետագայում զբաղեցնում էին Մեծ Հայքի Մոլք նահանգը և Վասպուրական նահանգի Անձնացիք գավառը: Այստեղ էր Խուրուշկիա թագավորությունը՝ կոչված նաև Արմիրայի և Նաիրի:

Մեր կարծիքով, Խուրուշկիա թագավորությունը փոխնիփոխ կառավարվել է զինվորական և քրմական դասերի ներկայացուցիչների կողմից: Ինչպես տեսանք, Խուրուշկիայի Կալի/Կալիա արքայանունը խոսում է այն կրած անձի զինվոր-արքա լինելու մասին: Խսկ նրա հաջորդներից մեկի Իսանզու/Յանզու անունը, ինչպես կտեսնենք ստորև, խոսում է այն կրած անձի քուրմ-արքա լինելու մասին: Սա Ուրարտուի թագավոր Մուսա I-ի (մ.թ.ա. 735-713 թթ.) և Ասորեստանի թագավոր Սարգոն II-ի (մ.թ.ա. 721-705 թթ.) ժամանակակիցն էր<sup>38</sup>: Հստակ է, որ Խանչու/Yanzu արքայանունը կազմված է\* i-anz-u բաղադրիչներից: Սրանցից առաջինը ի նախորդին է, որը «ձայնավորի մոտ դառնում է յ (երկուսն էլ հնչմամբ նախապես նույն էին)<sup>39</sup>», երրորդը կարող է լինել կամ -ու վերջածանցը (հիմնտ. աղու, թթու, խորովու, կծու, ձրազու), կամ սեռական հոլովի -ոյ վերջավորությունը, խսկ երկրորդ բաղադրիչը՝ բարի արմատն է, հ.-ե. \*անց-ը, որից \*անց->անձն: Հնդեվրոպականի բուն արմատն է \*առօ-«փշել, շնչել», որից անձն բարի

<sup>33</sup> Տե՛ս Gurney O. -1970, էջ 261, նկ. 56a, 56b; Meyer Ed. -1928 (առև. Խաչատրյան Ա.-1933, էջեր 107-108):

<sup>34</sup> Դյակոնով Ի. -1968, ս. 43.

<sup>35</sup> Նույն տեղում, էջ 87, ծան. 32:

<sup>36</sup> Դյակոնով Ի. -1951, №№ 2, 10.

<sup>37</sup> Արյունյան Ի. -1970, ս. 14, 16.

<sup>38</sup> ՀՃՊՀ -1981, հ. I, էջ 33:

<sup>39</sup> Վճառյան Հ. -1973, հ. II, էջ 235:

«առաջին իմաստն եղել է «հոգի». հմմտ. ... հոգի, որ իմա նշանակում է նաև «անձն». ինչ. երկու հոգի, մի քանի հոգի ևն»<sup>40</sup>. Հիշենք Անձնացիքի Հոգլոց վանքը<sup>41</sup>:

**Եզրականգում.** ա. Ասորեստանյան արձանագրություններում երեք տարբեր անուններով՝ Նաիրի (նեղ առումով), Խուրուշկիա (մայրաքաղաքի անունով) և Արսիրա-լի (իշխող կառամարտիկների անունով) հիշատակվել է միևնույն երկիրը՝ հետագա Մոկքի Անձնացիքի տարածքն զբաղեցրած և Ուրարտուի հզորության դարաշրջանում նրան ենթարկված փոքր թագավորությունը:

բ. Սեպագրության դարաշրջանում Խուրուշկիան ռազմաքաղաքական առումով բավականին ուժեղ է եղել՝ շնորհիվ զինվորական, մասամբ նաև քրմական դասերը ներկայացնող կառամարտիկների: Սրանց մի մասը Խեմուլա/Խիմուլա/Խիմմե անվամբ Հայկական լեռնաշխարհի այլ կառամարտիկների հետ միասին՝ որպես վարձկաններ ծառայել է խեթական բանակում:

գ. Հորվածում բերված, մեկնաբանված և ստուգաբանված նյութը խոսում է այն մասին, որ սեպագրային դարաշրջանի Խուրուշկիան եղել է առավելապես զինվորական դասի (մասամբ նաև քրմական) վերնախավը ներկայացրած կառամարտիկների կողմից կառավարվող և հայկական բնակչություն ունեցող երկիր՝ վաղպետական կազմավորում:

## О ТОЖДЕСТВЕ И ХАРАКТЕРЕ СТРАН ХУБУШКИА И АРМИРАЛИ

*Петросян С. Г.*

**Ключевые слова:** колесничий, классы, Армирали, Мокк, Андзевацик, Армарук, Хова даашт, Хубушкиа, Хемува, Урарту.

Среди мелких стран Армянского нагорья ассирийские источники упоминают также страну Хубушкиа (Hubuškia). Она охватывала часть южной Армении южнее озера Ван, в бассейне реки Восточный Тигр. По нашему мнению, одноименный город Хубушкиа-столица страны, находился в центре страны, на поле Хова даашт. С компонентом Հիբ-//\*Խով- в топониме Hubuškia ср. топоним <Խվ> (впосл. Օվ)>род. под. <Խվա> (> <Խվա դաշտ “поле Хова”).

Древнеармянские княжеские роды Мокаки и Андзеваци вместе упомянуты в “Истории Армении” Мовсеса Хоренаци. По соседству, в бассейне реки Восточный Тигр, в Мокке и Андзевацике, были также их владения. Значит, и предки этих княжеских родов из племени Химува/Химме жили по соседству в этих местах, т. е. в клинописной стране Хубушкиа-

<sup>40</sup> Աճառյան Հ. -1971, I, էջեր 201-203:

<sup>41</sup> Անձ-եւ-ացիք/Անձ-աւ-ացիք տոհմանուն/տեղանունը ծագումնաբանական կապի մեջ է Ianzu/Ianzu արքայանվան հետ, ինչպիսին է սրա կապը անձ-ն «հոգի, անձ» բառի հետ: Սրանց բոլորի իմաստաբանական հենքը պայմանավորված է եղել «<ոգլոց վանք>»-ին նախորդած հեթանոսական սրբավայրի պաշտամունքով: Տոհմանուն-տեղանվան և արքայանվան կապի առթիվ հիշենք, որ սեպագրերի «ու» ընթերցվող նշանը կարելի է ընթերցել նաև «օ», «աւ», «եւ» (հմմտ. Alištu//\*Aliste<sup>շ</sup>>Աղստել և Անձնացի/Անձաւացի, Pardu//\*Parda<sup>շ</sup>>Պարտսև :

Армирали. Для *Армирали* <\*arm-ir-ali ср. *Зармайр*<\*z-arm-ayr где \*arm- “колесница” (ср. др. греч. ἄρμα “колесница”). Союз стран – будущих областей древней Армении Мокка и Андзевацика являлся важнейшим очагом формирования не только индоевропейского социального института двух вождей, но и культа индоевропейских божественных близнецовых (ср. Санасар и Багдасар в эпосе «Сасна црер»).

## ABOUT THE IDENTIFICATION AND CHARACTER OF THE COUNTRIES KHUBUSHKIA AND ARMIRALI

*Petrosyan S. G.*

**Key words:** charioteers, classes/social estates, Khubushkia, Armirali, Mokq, Andzevatsik, Armaruk, Hovadasht, Khemuva, Urartu.

Assyrian sources mention the country Khubushkia (Hubuškia). It was among the smaller countries situated on the Armenian Tavros. The Khubushkia occupied the part of Southern Armenia, to south of Lake Van, in the river basin of Eastern Tigris. According to the author, the capital of country-of the same name Khubushkia, was situated in the centre of country in *Hovadasht*. In the toponym Հub-ušk-ia for component Հub-/\*Hov- compare with Armenian toponym <nվ (next Oվ)><nվա(><nվա դաշն “field of Hova”), possessive case: *Hova*.

Ancient Armenian princely families Moktsi and Andzavatsi are mentioned together in the “History of Armenia” by Movses Khorenatsi. So, their possessions were in the neighbourhood in the river basin of Eastern Tigris, hence the ancestors of the tribe Khimuva/Khimme lived in the neighbourhood in the cuneiform Khubushkia-Armirali. For *Armirali*<\*arm-ir-ali compare with *Zarmayr*<\*z-arm-ayr, where \*arm-“chariot” (compare ancient Greek ἄρμα “chariot”).

To deduce, the Union of the future regions of ancient Armenia – Mokq and Andzevatsik was the most important center of that time where Indo-European social institute of two leaders and Indo-European cult of godlike Twins were shaped (compare with Sanasar and Baghdasar from “Sasna tsrer”).

### Գ ր ա կ ա ն ո ւ թ յ ո ւ ն

- Ա-Դ. -1912, Վանի, Բիթիսի և Երզրումի վիլայեթներ, Երևան:
- Աղոն Ն. -1972, Հայաստանի պատմություն. Ակունքները. X-VI դդ. մ.թ.ա., Երևան:
- Աճառյան Հ. -1957, Լիակատարք քերականություն հայոց լեզվի, հ. III, Երևան:
- Աճառյան Հ. -1973, Հայերեն արմատական բառարան, հ. II, Երևան:
- Երեմյան Ս. -1963, Հայաստանը բառ «Աշխարհացոյց»-ի, Երևան:
- Խաչատրյան Ա. -1933, Հայաստանի սեպագրական շրջանի պատմություն, Երևան:
- Կարազոյան -1978, Արևելյան Հայաստանի ուրարտական տեղանունները // «Լրաբեր հասարակական գիտությունների» թիվ 10:
- Կարախանյան Գ., Սաֆյան Պ. -1970, Սյունիքի ժայռապատկերները // «Հայաստանի հնագիտական հուշարձանները», 4, Ժայռապատկերները, Երևան:
- Կուն Ն. -1956, Հին Հռոնաստանի լեզենդներն ու առասպեկները, Երևան:
- ՀԺՊՀ -1981, «այ ժողովրդի պատմության քրեստոնատիա», հ. I, հնագույն ժամանակներից մինչև IX դարի կեսերը, Երևան:
- Մալխասյանց Ստ. -1945, Հայերեն բացադրական բառարան, հ. IV, Երևան:
- Խորենացի -1981, Սովորի Խորենացու պատմութիւն Հայոց, Երևան:

13. **Պետրոսյան Ս. -1984.** Սարդուրի Բ-ի անդրսևանյան արշավանքի երթուղու շուրջ // «Պատմա-քանակական հանդես», թիվ 2:
14. **Պետրոսյան Ս. -1991.** Երկգույն-երկարկ տիեզերքի մասին առասպելաբանական պատկերացումը՝ Հայկական լեռնաշխարհում // «Լրաբեր հասարակական գիտությունների» թիվ 2:
15. **Զահոռլյան Գ. -1987.** Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Երևան:
16. **ՍԾ -1936.** «Սաման ծուկը» Ժողովրդական վեպ, հ. I, Երևան:
17. **Մրգանձայանց Գ. -1978.** Երկեր, հ. I, Երևան:
18. **Քիւզանդացի -1987.** Փաստովի Քիւզանդացու Պատմութիւն Հայոց, թարգմանությունը և ծանոթագրությունները Ստ. Մալխասյանցի, Եր., 1987:
19. **Արդյունյան Հ. -1970.** Բայանի (Ուրարտ). Военно-политическая история и вопросы топонимики, Ереван.
20. **Гамкрелидзе Т., Иванов В. -1984.** Индоевроопейский язык и индоевропейцы, т. II, Москва.
21. **Дьяконов И. -1968.** Предыстория армянского народа, Ереван.
22. **Дьяконов И. -1951.** Ассиро-вавилонские источники по истории Урарту//«Вестник древней истории».
23. **Меликишвили Г. -1960.** Урартские клинообразные надписи, Москва.
24. **Петросян С. -1987.** Племенной союз Хайаса-Аззи в системе двоичных противопоставлений // «Լրաբեր հասարակական գիտությունների», թիվ 3:
25. **Тер-Гевондян А. -1977.** Армения и арабский халифат, Ереван.
26. **Gurney O. 1970.** Hetysci, Panstwowe Wydawnictwo Naukowe, Werszawa.
27. **WVDO -1916/1926.** Keilschrifttexte aus Boghazköi (Wissenschaftliche Veröffentlichung der Deutschen Orientgesellschaft), Leipzig-Berlin. VI.
28. **Meyer Ed. -1928.** Geschichte ägyptischen Grossmach.

Հնդունվել է՝ 07. 09. 2022

Գրախսուվել է՝ 29. 10. 2022

Հանձնվել է տպ.՝ 28. 11. 2022

**Տեղեկություններ հեղինակի մասին**

**Սարգիս ՊԵՏՐՈՍՅԱՆ՝** պատմական գիտությունների դոկտոր,  
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի  
առաջատար գիտաշխատող, էլ. հասցե՝ vahe1996@mail.ru